

որուն վրայ մարդս կրնայ վստահ ըլլալ
ծանր և տրտմալի հանգամանաց մէջ, և
զուարթարար մնջկատակ մը, պարապոյ
ու հանգստեան ժամերուն ձանձրութիւնը
փարատելու համար:

(Սաւամանգ ըլլալով, ինչպէս վերն
ըսինք, ցրտի աղէկ դիմանալովն և ջու-
րի մէջ նետուած բանը բերելու յաջո-

ղակութեանն համար, քանի մը որսորդ-
ներ ճահիճներու մէջ որսորդութեան
գործածեցին զինքը: (Սէպէտ փորձեր-
նին բոլորովին անյաջող չէլաւ, բայց ին-
չուան հիմա գանգրահերը բարակին
պէս որսի յարմար ըլլալուն անուն մը
չունի:

ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Բմառն 'ի բուն
 Երգելու հետ էր ճրպուռն,
 Զըմեռն հասաւ
 Ուտելու բան չըգրտաւ.
 Ոչ ճանձի կըտոր,
 Ոչ մանր որդերու
 Սընացորդ բըտոր:
 Ելաւ գընաց
 Գըրացի մըրջիւնին քով.
 Կու լար սոված,
 Փոխ կ'ուզէր աղաչելով
 Սէկ քանի հատիկ,
 Որոնցմով ապրի
 Սինչև ցը Օ ատիկ.
 Կ'երդնում կ'ըսէր
 Խօսք կու տար, խօսք անբանի,
 Վէզ դարձընել
 Սինչև նոր հունձքերն հասնի,
 Գըլուխը շահով
 Հարիւրին տանով:
 Սըրջիւնն ալ փոխ տալ չիտէ,
 Ըս իրեն ցեղին
 Սէկ պըզտի պակսութիւնն է:
 Բմառուան տաքին
 Բանդ ու գործդ ինչ էր,
 Հարցուց փոխառուին: —
 — Զորեկն ու գիշեր,
 Ինձ մի սըրգողիւր,
 Եկող գացողին
 Կ'երգէի իժիր: —
 Կ'երգէիր,
 Ըգէկ ա.
 Հակա ել գընա
 Պար բըռնէ հիմա: